



# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015թ. դեկտեմբերի 19-ին տեղի կունենա  
Գավառի պետական համալսարանի ամենամյա 18-րդ գիտաժողովը՝  
նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին:

## 1. Գիտաժողովն անցկացվելու է ըստ գիտության հետևյալ բնագավառների.

- ✓ Տիզիկամաթենատիկական գիտություններ
- ✓ Քիմիական գիտություններ
- ✓ Կենսաբանական գիտություններ
- ✓ Տեխնիկական գիտություններ
- ✓ Էկոլոգիական գիտություններ
- ✓ Գյուղատնտեսական գիտություններ
- ✓ Պատմական գիտություններ
- ✓ Տնտեսական գիտություններ
- ✓ Փիլիսոփայական գիտություններ
- ✓ Բանասիրական գիտություններ
- ✓ Իրավաբանական գիտություններ
- ✓ Մանկավարժական գիտություններ
- ✓ Հոգեբանական գիտություններ
- ✓ Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ
- ✓ Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն

## 2. Հոդվածների ներկայացվող տեխնիկական պահանջներն են՝

Գիտաժողովի նյութերի հրապարակման համար խնդրում ենք մինչև ս/թ դեկտեմբերի 3-ը Գավառի պետական համալսարան ներկայացնել գիտական հոդված՝ հինգ էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով երկու օրինակից, համակարգչային շարվածքով (A4 չափի տպագրական թղթի վրա, Sylfaen, Times New Roman տառատեսակներով, 1,15 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 20 մմ լուսանցքով): Վերևում նշել վերնագիրը՝ 12 տառաչափով (մեծատառերով, **Bold**): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (**Bold**), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել մեծատառով նոր տողից), բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև բանալի բառերը, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը: Չափորոշիչներին չհամապատասխանող զեկույցները չեն ընդունվելու: Զեկույցումները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:

***Գից անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ամբիոնի երաշխավորությունը, կարծիք  
ստաջարկվող հոդվածի մասին:***

Գավառի պետական համալսարան,  
ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1,  
հեռ. (0-60) 46-04-03, (0-264) 2-57-75  
E- mail: info@gsu.am